

ՍԵՌԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՐՁ

Ս. Ֆ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սեռը մարդու ողջ էությունը պայմանավորող հիմնական բնութագրերից է: Այդ իսկ պատճառով մինչև վերջերս սեռային տարբերությունը համարվում էր ինքնին հասկանալի, բնության կողմից բոլորին մեկընդմիջտ տրված հատկություն:

XIX դ. վերջին - XX դ. սկզբին, դառնալով գիտական ուսումնասիրության առարկա, սեռային տարբերությունների խնդիրը կորցրեց իր թվացյալ պարզությունը: Ակնհայտ, հասկանալի, անհերքելի թվացող երևույթի բարդությունը գերազանցեց բոլոր ակնկալությունները:

Կենսաբանական իմաստով սեռը գենետիկական, ձևաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների այնպիսի համակցություն է, որն ապահովում է օրգանիզմի սեռական բազմացումը¹:

Սակայն մարդուն բնութագրելու համար նման ձևակերպումը բավարար չէ, քանի որ սեռը վերարտադրողական, ընդհանուր սոմատիկ, սոցիալական և վարքային բնութագրերի համախիթ է, որը պայմանավորում է անհատի տղա կամ աղջիկ, կին կամ տղամարդ լինելը²: Դ. Ն. Իսակի և Վ. Ե. Կազանի կողմից տրված այս սահմանումը մենք համարում ենք առավել արդարացի և օրինաչափ:

Անգլիացի անվանի գիտնականներ Լ. Ֆ. Գոլյերը և Մ. Ջ. Ռոզալդոն, ինչպես նաև Յ. Ե. Ալյոշինան և Ա. Ս. Վոլոշիչը գտնում են, որ գոյություն ունեն սեռային տարբերությունների ուսումնասիրման սկզբունքորեն տարբեր և հակադիր երկու մոտեցումներ³: Համաձայն առաջինի, ավանդական մոտեցման սեռային տարբերակումը առավել համապարփակ կենսաբանական գործընթացն է, ըստ որի մշակույթը միայն ձևավորում է այս կամ այն տարատեսակներով:

Երկրորդ տեսակետը, որը գերիշխում է հասարակական գիտություններում, պընդում է, որ սեռը բացառապես սոցիալական գործոն է: Առաջին գործոնի ելակետը կենսաբանական սեռային երկձևությունն (դիմորֆիզմ) է, որ դրսևորվում է տղամարդկանց և կանանց հոգեֆիզիոլոգիական հակադրումների դրդապատճառների, ընդունակությունների և հետաքրքրությունների անհատական տարբերությունների որոշակի համակցության մեջ: Հեղինակների կարծիքով, այդ տարբերություններն առարկայանում են աշխատանքի և այլ սոցիալական դերերի սեռային բաժանման տեսքով:

Համաշխարհային գրականության մեջ մեծ թվով հետազոտություններ են նվիրված օճտոգենեզի և սոցիոգենեզի ընթացքում սեռային տարբերությունների ուսումնասիրման խնդրին, որտեղ վերլուծվում են մարդկանց վարքի, խառնվածքի, մասնագիտության ընտրության, մշակույթի զարգացման, սոցիալական դերերի տարբերակման, ինքնագի-

¹ Տե՛ս Դ. Վ. Колесов, Н. Б. Сельверова, Физиолого-педагогические аспекты полового воспитания, М., 1978, էջ 35:

² Տե՛ս Դ. Н. Исаев, В. Е. Каган, Половое воспитание детей, Л., 1986, էջ 21:

³ Տե՛ս Ю. Е. Алешина, А. С. Волович, Проблема усвоения ролей мужчины и женщины, "Вопр. психологии", 1994, No 4, էջ 74-82 1975. В. Е. Каган, Половые аспекты индивидуальности. В кн.: "Психологические проблемы индивидуальности", М., 1994., вып. 2, էջ 109: L. F. Gollier, M. Z. Rogaldo. Politics and Gender in Simple Societies. Cambridge. London. N. Y., 1981, էջ 315:

տակցության ձևավորման և այլնի մեջ սեռային տարբերությունների դրսևորումները:

XX դ. 70-ական թթ. սկսած հոգեւեռական տարբերակման և սեռային տարբերությունների խնդրին տարեկան նվիրվում է մինչև 1500 հրատարակում:

Հոգեւեռական տարբերակման առավել վիճելի խնդիրները կապված են մանկության հետ: Համաձայն գրական աղբյուրների, այս լուրջ խնդրի բոլոր կողմերի վերաբերյալ առկա են տարածայնություններ:

Ըստ Ի. Ս. Կոնի տվյալների, միջնադարում հանդուրժողաբար էին վերաբերվում տղաների մոտ սեռականության դրսևորումներին¹: Մաստուրբացիան (ձեռնաշարժությունը) համարվում էր տիպիկ «մանկական զանցանք»: Հետագայում շեշտը դրվում է երեխայի ֆիզիկական և հոգեբանական «անմեղության» պահպանման վրա: Հոգեբանական «անմեղությունը» հանդես էր գալիս «երջանիկ անգիտության» տեսքով:

XV դարի սկզբին դոմինիկյան վանական Զովանի Դոմինիչին գրում էր, որ երեխան պետք է տարբերի տղամարդկանց ու կանանց հագուստով և սանրվածքով, նա պարտավոր է քնել շապիկով, իսկ ծնողները պետք է նրա մեջ ներարկեն ամոթխածություն: Սակայն XVI դարում նման կանոններ հազվադեպ էին իրականացվում: Ինչպես վկայում են Լյուդովիկոս XIII անձնական բժիշկի գրառումները, XVI դարի սկզբին ծնողները և մեծահասակները երեխաների ներկայությամբ ոչ միայն ազատորեն քննարկում էին սեռի հետ կապված հարցերը, այլև անպարկեշտություն չէին համարում, տղայի սեռական օրգանների հետ «խաղալով», նրա մոտ էրեկցիա առաջացնելը: Բայց բարքերը հետզհետե փոխվում են: Ազնվական ընտանիքներում երեխաներին առանձնացնում են մեծահասակներից՝ նրանց խնամքը վստահելով հատուկ դաստիարակներից: Խստացնում է վերաբերմունքը մերկության և մարմնական փորձարարության նկատմամբ: Պորժուայի Թանգենիստական դպրոցը, որը մեծ ազդեցություն է թողել նոր ժամանակի մանկավարժության վրա, հռչակում է երեխայի վարքի և զգացմունքների խիստ վերահսկողության սկզբունքը: Երեխան չպետք է արտահայտի իր զգացմունքները, քնի ժամանակ ոչ ոք չպետք է տեսնի նրա մարմնի ձևը:

Ամերիկյան անվանի ազգագրագետ Մ. Միզը հանգամանորեն ուսումնասիրել է սեռային տարբերությունների բնույթը և դրանց փոփոխությունը ժամանակակից հասարակության մեջ²: Բազմաթիվ մշակույթներ, հատկապես արևելյան, ամբողջացնում էին սեռական ոլորտը՝ համարելով այն մշակութային առանձնահատուկ արժեք:

1972 թվականին Ջ. Մանին և Ա. Ա. Էնրհարդը կենսաբանական և հոգեւեռական պայմանավորվածության բարդ համալիրի վերլուծության հիման վրա մշակեցին հոգեւեռական տարբերակման համակարգ³: Այդ համակարգում ակնառու է հոգեւեռական տարբերակման գործընթացի այնպիսի առանցքային միջնորդավորող տարր, ինչպիսին այլ մարդկանց վարքն է: Մասնավորապես, տղաները ավելի ագրեսիվ են և ինքնուրույն, իսկ աղջիկները՝ կողմնորոշված մոր կերպարին:

Ազգագրագետների և սոցիոլոգների հետազոտությունները ցույց են տվել, որ սոցիալական սեռային դերերը տարբեր հասարակություններում անհավասարաչափ են բաշխված և կախված են աշխատանքի հասարակական բաժանումից: Տղամարդկանց և կանանց հոգեկան հատկությունները փոփոխվում են միջավայրի, դաստիարակության, գործունեության տեսակի ու այլ գործոնների ազդեցությամբ և պայմանավորված են դրանցով: Այն սոցիալական նորմերը, որոնցով որոշվում են տղամարդկանց և կանանց զբաղմունքները, կոչվում են սոցիալական սեռային դերեր⁴: Կախված այն հանգամանքից, թե ինչպես է երեխան կողմնորոշվում իր սեռադերային վարքում, տեղի է ունենում նրա կայացումը իբրև տղամարդ կամ կին: Այդ պատճառով չափազանց կարևոր է, որ երեխան ճիշտ լուրացնի իր սեռային դերը նախադպրոցական տարիքում:

¹ Տե՛ս Մ. Мид, Культура и мир детства, М., 1988, էջ 245-315:

² Տե՛ս Ի. С. Кон, Этнография детства, "Сов. этнография", М., 1981, № 5, էջ 47-59:

³ Տե՛ս М. Mead Male and A. Female, Study of the Sexes in changing World N. Y.-Morrow, 1949, էջ 49-89:

⁴ Տե՛ս J. Money, A. A. Enrhard, Man and Woman. Boy and girl. Boston, 1972, էջ 259:

⁵ Տե՛ս Ի. С. Кон, Психология половых различий, "Вопр. психологии", 1981, № 2, էջ 47-57:

Սեռային տարբերություններն ակնառու են տղաների և աղջիկների խաղի մեջ: Տղաները նախապատվությունը տալիս են մեքենաներին, խաղալիքներից կառուցում են տներ, փողոցներ, բուրգեր, աղջիկները՝ տիկնիկներին: Բաճախ օգտագործում են կենդանիների պատկերներ: Հասկանալի է, որ խաղային տարածության կազմակերպման տարբերությունները կառուցողական գործունեությունների արտապատկերում Բստակորեն պրոյեկտվում է երեխաների սեռական օրգանների անատոմիան: Այն դրսևորվում է նաև խաղի բնույթի մեջ. տղաները հակված են արտաքին տարածության գրավմանը և իրենց ենթարկմանը, իսկ աղջիկների խաղը իրենց ապագա գործունեության նախատիպ է:

Համաձայն Ե. Վ. Իվանովայի տվյալների, թայլանդացի երեխան քիչ բան գիտի սեռային տարբերակման մասին, քանի որ մինչև վերջին ժամանակները տղամարդկանց և կանանց հագուստը գրեթե չէր տարբերվում: Նրա համար ավելի ակնառու է տարիքային տարբերակումը, որը դրսևորվում է տարիքով պայմանավորված միմյանց դիմելու ոճի, հարգանքի նշանների տեսքով: Հեղինակի վկայությամբ՝ նախքան հագուստ կրելը փոքրիկ աղջիկները արդեն կրում են ոսկյա և արծաթյա զարդեր: Մեկ տարեկան տղայի դաստակին կապում են առնանդամի փոքր քանդակակար, իսկ աղջկան հագցնում են ամոթխածության գոտի:

Նշենք, որ սեռական դաստիարակության վրա մեծապես ազդում են աշխարհագրական և ազգագրական տվյալները:

Այդպես, համաձայն Մ. Չերնուշեկի¹⁰ տվյալների, փոքրիկ էսկիմոսը մեծանում է միանգամայն այլ միջավայրում, քան Ամազոնկայի ավազանում բնակվող նամբիկվանների ցեղի անդամը, այդ պատճառով էթնոմշակութային տարբերությունները դրսևորվում են ոչ միայն կացարանի տիպի, սննդի, սովորույթների, ավանդույթների, այլև հագուստի, տարբեր սեռի երեխաների ծնողական խնամքի մեջ: Օրինակ, սիուքսների հրնդկական ցեղի տղամարդկանց մանուկ հասակից պատրաստում են արագ և կտրուկ շարժումների, տեսողական ստուգության, արշավային կյանքի դժվարություններին, ձկնորսական սարքերի հետ աշխատանքին:

Վ. Կ. Կոտիրոյի վկայությամբ երեխան սովորում է համեմատել իրեն ուրիշների հետ, իսկ 4-5 տարեկանում կանխատեսել իր վարքի հետևանքները¹¹: Ա. Վալոնը այդ տարիքում առանձնացնում է ալտրոիզմի փուլը: Խոսելով երեխայի մեջ իրեն և ուրիշներին ընկալելու գործընթացի զարգացման մասին՝ Ա. Վալոնը նշում է, որ սեփական «ես»-ի տարածումը շրջապատի վրա, միաժամանակ լինելով ուրիշներից օտարացում, նախատեսում է հակադիր փուլը, որի ընթացքում երեխան սկսում է տարբերել իրեն ուրիշներից:

Յ. Լիմբլադը նշում է, որ հնդկացի տղաներին և աղջիկներին դաստիարակում են տարբեր կերպ: Աղջիկները երբեք չեն մասնակցում տղաների խաղերին և չորս տարեկանից սկսում են կատարել կանացի աշխատանք, իսկ տղաներին սովորեցնում են նետ արձակել՝ նախապատրաստելով որսորդությանը¹²: Դա վկայում է սեռերի միջև դերերի բաշխման մեծ տարբերության մասին:

Նոր Գվինեայում բնակվող արապելների սամուական ցեղում մինչև 6-7 տարեկան երեխաները կատարում են իրենց սեռին համապատասխանող աշխատանք: Փոքր աղջկան նախ և առաջ սովորեցնում են խուսափել տղաներից: Համաձայն սամուական դաստիարակչական համակարգի՝ երեխաները պետք է ծանոթ լինեն նաև սեռական փոխհարաբերությունների ֆիզիկական կողմին:

Հոգեւեռական զարգացման գործընթացում Ջ. Ֆրեյդը ևս առանձնացնում է մի շարք փուլեր՝ մինչև 18 ամսական, 18 ամսականից մինչև երեք տարեկան, երեքից - վեց

¹⁰ Տե՛ս Ե. В. Иванова, Социализация детей в Таиланде, В сб.: Этнография детства, М., 1988, էջ 62-82:

¹¹ Տե՛ս Մ. Черноушек, Психология жизненной среды, М., 1989, էջ 206:

¹² Տե՛ս "Формирование взаимоотношений дошкольников в детском саду и семье". Под ред. В. К. Котырло, М., 1984, էջ 24-25:

¹³ Տե՛ս Я. Линдبلاد, Человек-ты, Я и первоначальный, М., 1991, էջ 171-175:

տարեկան¹³: Երրորդ փուլը հեղինակն անվանում է ֆալիկ: Այդ փուլում առանձնահատուկ հետաքրքրություն է առաջանում սեռական օրգանների նկատմամբ: Տղաները հետզհետե նույնացվում են հոր, իսկ աղջիկները՝ մոր հետ:

Սակայն հետագայում ֆրոյդյան մի շարք դրույթներ վերանայվեցին: Օրինակ, նույնացման տեսության մասին խոսելիս Բ. Մալինովսկին նշում է, որ տղայի նույնացումը միշտ չէ, որ հոր հետ է տեղի ունենում, տղան կարող է նույնացնել իրեն արական այլ կերպարի հետ¹⁴:

Հոգեբանության մեջ սեռային տարբերությունների վերաբերյալ ներկայումս առկա է երեք միտում. առաջին՝ կենսագենետիկական, որը վերլուծության է ենթարկում սոցիալական գործոնների ազդեցության տակ գենետիկական ծրագրի դրսևորման օրինաչափությունները օճթոգենեզի ընթացքում: Երկրորդ՝ սեռային տարբերությունների ուսումնասիրության, որը կազմավորում է սոցիոգենետիկ ուղղվածությունը, և երրորդ՝ վերլուծում է սեռային նույնացման (իդենտիկության), «Ես - պատկերի» ձևավորման, սեռային երկձևության (դիմորֆիզմ) հետ կապված անհատական ոճի խնդիրներ:

Գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ, այսպես կոչված, սոցիալ-մշակութային սեռաբանության բնագավառը սկզբնավորվել է XIX դարի վերջին: Սկզբնական շրջանում կատարված հետազոտությունները սիրողական բնույթ էին կրում: Հետագայում վերջիններիս միացան նաև ազգագրական, սոցիոլոգիական, գենետիկական ուղղությունների հետազոտություններ: Այդպես, 1975 թվականին ԱՄՆ-ում սկսում է հրատարակվել «Sex Roles» («Սեռային դերեր») հանդեսը: Ի հայտ է գալիս մարդու մասին գիտությունների միջընդհանուր ոլորտի մի նոր բնագավառ, այն է՝ սեռային սոցիալականացման և սեռական լուսավորության պատմություն:

Այնհայտ է, որ սեռային պատկանելիության պայմանավորվածության, սեռային տարբերությունների հոգեբանության, սեռական վարքի օրինաչափությունների վերաբերյալ խնդիրների քննարկման համար անհրաժեշտ է տարբեր գիտությունների համագործակցություն: Ուստի պատահականություն չէ, որ սեռաբանությունը ունի իր պատմությունը, տեսությունը և ուսումնասիրման առարկան: Այդ տեսակետից դժվար է չհամաձայնել Բ. Գ. Ամանևի կարծիքի հետ, որ ֆիլոզոգենեզի և օճթոգենեզի ընթացքում սեռային երկձևության (դիմորֆիզմ) օրինաչափությունների ուսումնասիրությունն է, որը ներառում է նաև մարդու մոտ այդ երկձևության բարդ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը՝ կապված աշխատանքի բնական բաժանման, ամուսնության և ընտանիքի պատմության, դաստիարակության և այլնի հետ¹⁵:

Հոգեբանամանկավարժական գիտության տեսանկյունից չափազանց բարդ է սեռային նույնացման նախապայման հանդիսացող սեռային տարբերական հարցը: Գրականության մեջ հայտնի է Ջ. Մանհի սեռային տարբերական դասական սխեման, որին հատուկ է բազմաստիճան և բազմաչափ զարգացում՝ սկսած սաղմի գենետիկական նախապայմաններից մինչև սեռային դերի դրսևորումը¹⁶:

Սեռի բազմաստիճանության և բազմաչափության գիտակցումը էապես ազդում է սեռային տարբերական խնդրի բարդության վրա: Ի սկզբանե այն ներառում էր ձևաբանական, գենետիկական, հորմոնալ, վարքային, հոգեբանական և այլ գործոնների մի ամբողջ համալիր: Սակայն հետագայում առանձնացվեցին սեռային երկձևության չորս ինքնավար չափում՝ սեռային նույնացում, սեռային պատկանելիության հետ կապված վարք, սեռային ճանաչողական տարբերություններ և սեռական կողմնորոշում:

Մարդկային սեռականությունը և սեռային դերին պատկանելիությունը հնարավոր չէ հասկանալ առանց տվյալ մշակույթի և ընդհակառակը: Այսինքն՝ անհնար է հասկանալ հասարակության կենսակերպը, մարդկային փոխհարաբերությունները, մշակութային դրսևորումները անկախ մշակույթում իմաստավորվող և մարմնավորվող սեռա-

¹³ Տե՛ս 3. Фрейд, Введение в психоанализ, Лекции, М., 1991, էջ 35:

¹⁴ Տե՛ս B. Malinowsky, Sex and repression in savage society. M.Y. - Morrow. 1949, էջ 251:

¹⁵ Տե՛ս Б. Г. Ананьев, Человек как предмет познания, Л., 1968, էջ 25-72:

¹⁶ Տե՛ս J. Momey, Love and Sickness. The Science of sex. Gender Alternance and Pairbonding Baltimox. London. 1980, էջ 256:

կան վարքի առանձնահատկությունների իմացության:

Երեխայի մեջ իր և հակառակ սեռի մարդկանց սեռական օրգանների նկատմամբ հետաքրքրությունը ի հայտ է գալիս վաղ մանկության շրջանում՝ իբրև հետաքրքրասիրության և ուրիշների հետ համեմատվելու միջոցով ինքնաճանաչման պահանջմունքի դրսևորում: Երեխան սկզբից ընկալում է սեփական մարմինը, իսկ երկրորդային սեռային հատկանիշները նրա համար դառնում են միաժամանակ չափահասության և սեռի նշաններ:

Մարմնի և արտաքինի համապատասխանությունը որոշակի սեռային կադապայի այն կենտրոնական առանցքն է, որին հիմնվում է «մարմնական Ես»-ի կերպարը, և դրա հետ կապված՝ ինքնագնահատականի համակարգը: Մեր կողմից անցկացված գիտափորձերի շարքը ուղղված էր նախադպրոցական տարիքի երեխաների սեռային, ինքնագիտակցության դրսևորումների տարիքային առանձնահատկությունների դինամիկայի հետազոտմանը: Ստացված տվյալները դասակարգեցինք հինգ բլոկի՝ 1) սեռային պատկանելիություն, 2) սեռի փոփոխում, 3) խաղային տիպայնացում, 4) վարքային հավակնություններ, 5) համագործակցություն ծնողների հետ:

Բլոկներն առանձնացված են մեր կողմից մշակված հարցաշարի հիման վրա, որը ներառում է որոշակիորեն խմբավորված 15 հարց: Հետազոտությունը հնարավորություն տվեց բացահայտել 3-5 տարեկան երեխաների սեռային ինքնագիտակցության զարգացման դինամիկան: Պարզվեց, որ 3 տարեկան երեխաների բացարձակ մեծամասնությունը ճիշտ են նշում սեփական սեռը, սակայն, այդուհանդերձ, տալիս են շատ անորոշ բացատրություն, չեն կարողանում նշել տվյալ սեռին բնորոշ բնութագրերը, դասում են իրենց այս կամ այն սեռին՝ ելնելով ծնողների խոսքից:

Չորս տարեկան երեխաները հիմնականում կապում են սեփական սեռային պատկանելիությունը արտաքին հատկանիշների հետ: Չնայած որոշ երեխաներ, ինչպես և նախորդ փուլում, կողմնորոշվում են ծնողների խոսքերից ելնելով, մեծամասնությունը ճիշտ է որոշում սեփական սեռային պատկանելիությունը՝ իրական սեռը կապելով մարմնական հատկանիշների հետ:

Հինգ տարեկանում երեխաները հստակ որոշում են սեփական սեռը, դրան հատուկ բնութագրերով հանդերձ: Այսպես, նրանք, բացի արտաքին հատկանիշներից և անատոմիական կառուցվածքից, ուշադրություն են դարձնում նաև ուժային առանձնահատկությունների, երկրորդային սեռական հատկանիշների վրա, վերլուծության են ենթարկում վարքի իգական և արական ոճը: Բայց ամենակարևորն այն է, որ հստակորեն երևում է նույն սեռի ծնողի հետ նույնացումը:

Մոտ երեք տարեկանում տեղի է ունենում Ես-ի և միջավայրի տարանջատումը: Երեխան յուրացնում է իր մարմնի պատկերը, ընտելանում է իր արտացոլմանը հայելու մեջ, համեմատում իրեն ուրիշների հետ: Այդ շրջանում նա սկսում է օգտագործել «Ես» դերանունը: «Ես»-ի զարգացման մեկ այլ դրսևորում է մանկական հետաքրքրասիրությունը և հուզականությունը, որոնք և պայմանավորում են երեխայի վարքը: Այսպիսով, կարող ենք նշել, որ սեռական ինքնագիտակցությունը անցնում է մի քանի փուլ: Նախ երեխան փորձում է բացատրել իր սեռային պատկանելիությունը՝ ելնելով ծնողի խոսքից, ապա հիմնավորում է գտնում տարբեր արտաքին, ֆիզիոլոգիական և անատոմիական արտահայտումների մեջ և, ի վերջո, հիմնվում է սեռի բարոյական գնահատականի վրա: Չնայած այն փաստին, որ երեխան գտնվում է բարոյական հասկացություններից դուրս և նրա մեջ դեռևս ձևավորված չէ բարոյականության վերաբերյալ տարբեր կատեգորիաների գիտակցումը, այնուամենայնիվ 5 տարեկան երեխան կարողանում է գնահատել ինչպես հարաբերությունները, այնպես էլ միջսեռային վերաբերմունքները: Հասկանալի է, որ այս ամենը հնարավոր է դառնում այն հասարակ փաստի հետևանքով, որ երեխան, ապրելով սոցիալական միջավայրում, գտնվում է տարբեր սոցիալական ազդեցությունների տակ, յուրացնում է այն բարոյական նորմերը, որոնք ընդունված են տվյալ հասարակարգում՝ չգիտակցելով, սակայն, նրանց իմաստը: Ուստի երեխան գիտակցում է իր սեռը և միջսեռային փոխհարաբերությունները այն բարոյական նորմերի միջոցով, որոնք ներարկվում են ծնողների, մեծերի կողմից: Երեխան ծանոթա-

նում է իր միջավայրի վարքային նորմերին և սկսում դրանք յուրացնել, ինչը անձի զարգացման կարևորագույն պահերից է:

Սեռային ինքնագիտակցության ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ: Դրանցից է երեխայի կյանքում ծնողական ներգործության դերը: Ընդ որում, պետք է հաշվի առնվեն ծնողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, նրանց ներգործության ոճը, ընտանեկան ավանդույթույունները և այլն: Այսպես՝ ծնողները ճիշտ դիրք կզբաղեն երեխայի նկատմամբ, եթե համարեն նրան ինքնուրույն մարդ՝ պահանջելով նրանից ընտանիքում իր իսկ դերի հետ կապված որոշակի կանոնների ենթարկում: Ծնողների վարքը տարբեր կերպ է ազդում երեխայի «Ես - պատկերի» վրա: Ուստի տղաների և աղջիկների մեջ «Ես - պատկերի» զարգացման առանձնահատկությունների իմացությանն հիման վրա կառուցված ընտանեկան և հասարակական դաստիարակությունը կարող է մեծապես ազդել երեխայի անձի ձևավորման վրա:

Երեխայի սեռային դաստիարակության և ընտանիքի ազդեցության վերաբերյալ կարելի է առանձնացնել չորս հիմնական ոլորտ՝ սոցիալ-մշակութային, տեխնիկական - հիգիենիկ, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական: Այստեղ նկատի ունենք ընտանիքի կառուցվածքը, ծնողների կրթական մակարդակը, ընտանեկան ավանդույթույունները, գույքային հարաբերությունները, ծնողների զբաղվածությունը աշխատավայրում և այլն: Հատկանշական է, որ ընտանեկան միջավայրը մշտապես փոփոխվում է հասարակության զարգացումից կախված: Զույգային ընտանիքը, ի տարբերություն մեծ, «բաց ընտանիքների», դառնում է փակ հասարակական օղակ: Ընդ որում, էապես նվազում է բարեկամական կապերի նշանակությունը:

Այսպիսով, տարիքային հոգեբանության և մանկավարժության մեջ սեռական զարգացումը դիտարկվում է իբրև օճոթգենդի մի կողմ, իսկ սեռային դաստիարակությունը՝ սեռային սոցիալականացման արդյունք, որի ընթացքում անհատը յուրացնում է որոշակի սեռային դեր և սեռական վարքի կանոններ: Այստեղ առավել նշանակալի են ասոցիալական գործոնները, օրինակ՝ անհատի գործունեության կառուցվածքը, փոխհարաբերությունները, սեռային բարոյականության նորմերը և այլն:

Ըստ էության, մարդու հոգեսեռական զարգացումն սկսվում է նորածնի սեռային նույնացման ձևավորումից: Ընդ որում, որոշիչ դեր են խաղում ծնողները և մեծահասակները, որոնք սկսում են սովորեցնել երեխային իր սեռային դերը՝ ներշնչելով նրան, թե ինչ է նշանակում լինել տղա կամ աղջիկ: Դա, մանկավարժ - դաստիարակների կարծիքով, պայմանավորված է տղաների և աղջիկների դաստիարակման նպատակներով և վարքային բնական տարբերություններով:

Նախկին ԽՍՀՄ-ի մի շարք հանրապետություններում թեև սեռային տարբերությունների հոգեբանության բնագավառում կատարվում էին հետազոտություններ, սակայն դրանց արդյունքներն ըստ էության չէին հրապարակվում, սեռականության մասին հոգեվերլուծական գաղափարները նույնացվում էին հոգեբանական հետազոտության օբյեկտ հանդիսացող բուն սեռականության հետ: Պ. Պ. Բլոնսկու «Մանկական սեռականության ակնարկ»-ի լույս ընծայումից ի վեր (մինչ 1970-ականները) անձի վարքի չգիտակցված դրդապատճառների և օճոթգենդում սեռականության դերի վերաբերյալ հետազոտություններ չէին կատարվում: Այդ տարիներին հոգեբանության մեջ հստակորեն չէին տարբերակվում երկու տարբեր բնագավառներ՝ սեռային տարբերությունների հոգեբանություն և սեռականության հեգեբանություն:

Հետագայում, մի շարք հեղինակների աշխատանքների շնորհիվ, այդ բնագավառները հստակ տարբերակվեցին¹⁷:

Այսպիսով, սեռական կողմնորոշման, սեռական հակման վերաբերյալ կայուն նախապատվությունների ձևավորումը հոգեսեռական զարգացման կենտրոնական խրճիղներից է: Այդ տեսությունը առավել հիմնված է զարգացման հոգեբանության, քան

¹⁷ Տե՛ս օրինակ **А. И. Белкин**, Биологические и социальные факторы, формирующие половую идентификацию, В кн.: "Соотношение биологического и социального в человеке", М., 1975. **В. Е. Каган**, Половые аспекты индивидуальности. В кн.: "Психологические проблемы индивидуальности", М., 1994, вып. 2, էջ 109:

սարքերի օգտագործման տեսության վրա: Սեռական նախապատվությունների ձևավորումը սեռական կողմնորոշման կայացման կողմերից մեկն է: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ սեռային և սեռական դաստիարակության մեջ անհրաժեշտ է իմանալ սեռային զարգացման առանձնահատկությունները և օրինաչափությունները, սեռի փոխհարաբերությունները, ինչպես նաև այն, թե ինչպես են դրանք դրսևորվում հասարակական փոխհարաբերությունների ընթացքում, այդ թվում նաև ընտանեկան դաստիարակության մեջ:

С. Ф. АРУТЮНЯН - К вопросу осознания половой принадлежности. - Проблема пола и половой принадлежности, став с конца XIX в. предметом научного изучения, утратила свою кажущуюся тривиальность. С тех пор постоянно ведутся споры о том, что есть пол и как он определяется. Исследования этнографов, психологов и социологов показали, что социальные половые роли неодинаково распределены в разных обществах и зависят от общественного разделения труда.

Психические свойства мужчин и женщин, как носителей определенной социальной половой роли, детерминируются средой, воспитанием, видом деятельности и т. д. Половые отличия мальчиков и девочек проявляются в их игре.

С точки зрения психолого-педагогической науки весьма сложен вопрос о половой дифференцировке, результатом которой является половая идентичность. В нашем исследовании мы пытались проследить и определить динамику осознания ребенком от трех до пяти лет своей половой роли, а также установить пути и условия формирования полового самосознания у детей дошкольного возраста.